ՃՇՄԱՐՏԱԼԵԶՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԻ ՈՒ ԿԵՂՇԻՔԻ ԴԵՄ



1972 թվականին՝ գարնանը, Երևանում կազմակերպվել էր Անդրկովկասյան երեք հանրապետությունների պոեզիայի փառատոն: Վրաստանից ժամանել էր բանաստեղծների մի մեծ խումբ՝ Ի. Նոնեշվիլու, Ադրբեջանից՝ Մ. Ռահիմի գլխավորությամբ: Ադրբեջանի գրողների միության Բաքվի հայկական բաժանմունքի բանաստեղծ Ս. Գրիգորյանի ղեկավարությամբ մասնակցում էինք Վ. Աբրահամյանը, Վ. Հովակիմյանը և տողերիս հեղինակը:

Երևանում՝ Գրողների միությունում, հարևան հանրապետություններից ժամանած գրողներին բարեկամաբար ընդունեցին Պ. Սևակը, Վ. Դավթյանը, Գ. Էմինը, Ս. Հարությունյանը, Ռ. Գևորգյանը և ուրիշներ:

Երեկոյան պետք է հանդես գայինք հեռուստատեսությամբ: Առաջարկվեց այցելել աշխարհահռչակ նկարիչ Մարտիրոս Սարյանին: Հանդիպումը մեծ արվեստագետի հետ թևավորել էր բոլորին: 92-ամյա հանճարը փառահեղ բազմած էր բազկաթոռին: Նա ներկաներին զարմացրեց իր պայծառ հիշողությամբ: Մեկ առ մեկ տվեց Վրաստանի և Ադրբեջանի անվանի այն նկարիչների անունները, ում հետ հանդիպել էր և ինչ-որ առիթով օգնության ձեռք մեկնել:

Մոտ երկու ժամ տևած հանդիպումից հետո դուրս եկանք Վարպետի թանգարան-բնակարանից ու քայլեցինք Բաղրամյան պողոտայով դեպի Հրազդանի Հաղթանակ կամուրջը: Երբ հասանք այդ հրաշակերտ կառույցին, մեզ ավելի շատ գրավեց Զանգուի գարնանային խենթ շառաչը:

Իմ կողքին ադրբեջանցի բանաստեղծ Մամեդ Արազն էր: Բաքվում հարևանությամբ էին մեր բնակելի շենքերը: Իմ անմիջական օգնությամբ նա հայերենից թարգմանել էր Հ. Սահյանի «Որոտանի եզերքին» բանաստեղծությունների շարքը:

Հիացմունքով դիտում էինք Զանգվի արևաշող ալիքները, երբ նա անսպասելի շուռ եկավ ու թուրքավարի ասաց. «Սոկրատ գարդաշ (եղբայր), գիտե՞ս, որ Զանգուն ադրբեջանական գետ է, ոչ թե հայկական»:

Նրա այդ ցինիկ «հայտնագործությունից» ցնցված՝ ես հարցրի. «Մամեդ, կատակո՞ւմ ես, թե լուրջ ես խոսում»:

Նա վրա բերեց. «Ոչ, չեմ կատակում, ճիշտ եմ ասում»:

- Եվ դու հավատո՞ւմ ես այդ պոզավոր ստին,- դիմեցի նրան:

- Այո՛, հավատում եմ, որովհետև այդ սուտը մեր ապագա սերունդների համար է:

Թող գալիքում հայ սերունդներն ապացուցեն, որ Զանգուն հայերինն է, ոչ թե ադրբեջանցիներինը:

Ողջ երեկոյի ընթացքում ինձ հանգիստ չէր տալիս ազերի ոչ անհայտ այդ բանաստեղծի «հեռատեսությունը»: Հարևան հանրապետություններից հավաքվել էինք Երևանում՝ պոեզիայի երանգներով փառաբանելու հարևան ժողովուրդների բարեկամությունը, իսկ ադրբեջանցի բանաստեղծը ոչ միայն Զանգուն է համարում ազերական, այլև Հ. Սահյանի երգերի ակունք հայրենի Որոտանը, որին նվիրված շարքը թարգմանել էր ինքը:

Երևանից վերադարձա Ստեփանակերտ: Արդեն Բաքվից տեղափոխվել էի ու դասավանդում էի քաղաքի մանկավարժական ինստիտուտում: Խորհում էի՝ որտեղի՞ց է գալիս ադրբեջանցի մտավորականի այդ կեղծիքը: Միաժամանակ դժվար չէր կռահել: Ադրբեջանում պատմության զեղծարար Զիա Բունիաթովը՝ երիտթուրքական գաղափա-

ռաբանության այդ թութակն արդեն զլել էր կեղծիքի ու հերյուրանքի իր պարկապզուկը, որի նվագի տակ սկիզբ էր առել ազերի-թուրք «պատմաբանների» անճոռնի ամբոխապարը: Ու պատահական չպետք է համարել հայատյացության քարոզը, այնուհետև Սումգայիթում, Բաքվում, Գանձակում և այլ հայաշատ բնակավայրերում ադրբեջանցիների կողմից կազմակերպված շինարար հայ բնակչության արյունահեղ ջարդերը:

Արցախյան ազգային-ազատագրական գոյամարտում ջախջախված ադրբեջանական հրոսակների ղեկավարները, չհաշտվելով իրենց խայտառակ պարտության հետ, նոր թափ հաղորդեցին հայատյացությանը: 1999թ. Ադրբեջանի Հանրապետության նախագահ Հեյդար Ալիևը երկրի կառավարիչներին ու վայ գիտնականներին պատվիրեց հետևյալ ինքնամերկացնող կեղտոտ պատգամը. «Պետք է ստեղծել այնպիսի աշխատություններ, որոնցում մշտապես հետևողականորեն ապացուցվի, որ այն հողերը, որտեղ այժմ գտնվում է Հայաստանը, պատկանում են Ադրբեջանին: Մենք պետք է ճանապարհ բացենք գալիք սերունդների համար» («Բակինսկի ռաբոչի» թերթ, 11 փետրվարի):

Հոր այս «մարգարեական խորհրդի» հավատարիմ զինվորյալը դարձավ որդին՝ նոր սուլթան Իլհամ Ալիևը, որը չի խորշում պատմությունը եղծելու ու ստելու իր քաղաքականությունից՝ անընդմեջ հայտարարելով, որ հարկ եղած դեպքում զենքի ուժով ետ կվերցնի ոչ միայն Արցախը, այլև Երևանը: Ցավալին ու դատապարտելին այն, է որ իրենց «ազատամիտ» խանին սատարում են իրենց մշակութային գործիչ համարող «գրագետները»:

Վերջին մի քանի տարվա ընթացքում տասնյակ ադրբեջանական վայ պատմաբաններ հրատարակել են 50-ից ավելի հաստափոր գրքեր՝ հակահայկական զառանցանքների հորջորջումով: Պետք է պատասխանել նրանց ամենայն լրջությամբ ու խստությամբ:

Այդ ուղղությամբ խրախուսելի ու շնորհակալ գործ է կատարում պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, Արցախի գիտական կենտրոնի տնօրեն Ս.Վ. Դադայանը: 2016-ին վաստակաշատ պատմաբանի հեղինակությամբ հրատարակվեց «Լեռնային Ղարաբաղի քաղաքական պատմության փաստեր և հերյուրանքներ (1918-1923)» աշխատությունը: Ապա ընթերցողի սեղանին դրեց իր նոր, ստվարածավալ աշխատությունը՝ «Արցախ-Ղարաբաղի քաղաքական պատմությունը Խամսայից մինչև ինքնավարություն... փաստեր և հերյուրանքներ» խորագրով:

Գիրքը հրատարակվել է Արցախի գիտական կենտրոնի գիտական խորհրդի ու Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորությամբ: Խմբագրել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Է.Գ. Մինասյանը, գրախոսել են պատմական գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ Վ.Ռ. Բալայանը, Ա.Խ. Հայրունին, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ.Կ. Բաբայանը:

Նման աշխատությունների կարիքը միշտ զգացվել է: Տեղին է հիշել մեծանուն հայագետ Ջ.Ս. Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և Արևմտահայաստանը» (1967), «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» (1982), Լ.Ա. Բայրամյանի «Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում» (1982), Ս.Կ. Պողոսյանի «Գոյատևման պայքարի քառուղիներում (1989) ուսումնասիրությունները, որոնք լայն արձագանք գտան աշխարհահռչակ հայ և օտար գիտնականների շրջանում: Սակայն ճշմարտությունը պահանջում է ասել, որ Արցախ-Ղարաբաղի պատմությունը քիչ է լուսաբանվել հայագիտության ընդհանուր տեսադաշտում: Այդ բացը գալիս են լրացնելու Ս. Դադայանի աշխատությունները, առանձնապես 2017-ին հրատարակված բազմաշերտ ուսումնասիրությունը: Գրքի ներածականում հեղինակը նշում է ազերի-թուրք «պատմաբանների» կեղծիքի ու հերյուրանքների նպատակը: Նրանք ձգտում են հիմնավորելու հետևյալ հրեշավոր կեղծիքն ու սուտը.

- Արցախ-Ղարաբաղը հնուց անտի բնակեցված է եղել «ադրբեջանցիներով», իսկ հայերը, ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանի մյուս մասերում երևան են եկել

1828թ. Թուրքմենչայի պայմանագրից հետո:

- Ցարական Ռուսաստանի քաղաքականությունը Ղարաբաղի վերաբերյալ 18-19-րդ դարերում ամբողջությամբ գործել է միայն հայերի օգտին:

- Քյուրակչայի դաշնագրությունը կնքվել է երկու անկախ պետությունների՝ Ռուսաստանի և Ղարաբաղյան խանության միջև:

- Ղարաբաղի այսպես կոչված խանությունը առանձնահատուկ նշանակություն ունի ժամանակակից Ադրբեջանի պատմության մեջ:

- Պետերբուրգյան պալատն է հայ ժողովրդին «բնակեցրել» Հարավային Կովկասի տարածքներում:

- Էթնիկական գործոնով Արցախ-Ղարաբաղը պատկանել է Ադրբեջանին:

- 1905-1906 թվականների ջարդերը իբր հրահրել են հայերը:

- Հարավ-Կովկասյան մուսուլմանների առաջին հանրապետությունը՝ «Ադրբեջան» անունով, իբր ազգային-պետական հարաբերությունների վերածննդի արդյունք է... Ադրբեջանի հանրապետության ստեղծման գործընթացում միֆը ազերի էթնոսի մասին, հակառակ 19-րդ դարի առաջին քառորդի մուսուլմանական լիդերների էլիտայի (Ա. Աղաօղլի, Մ. Հյուսեյն-զադե) կարծիքի, ըստ որի, տարածաշրջանի մուսուլմանությունը այդ ժամանակաշրջանում դեռևս գտնվում էր ազգային պատկանելության որոնման մեջ:

- Մուսավաթականների նկրտումները հայկական վաղնջական տերիտորիաների՝ Նախիջևանի, Զանգեզուրի և Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ:

Լեռնային Ղարաբաղի հարցը ռազմական ուժով լուծելու ձգտումը՝ հակառակ հայերի կամքի:

- Ադրբեջանում և Հայաստանում սովետական կարգերի հաստատման պրոցեսի վերաբերյալ ադրբեջանական մեկնաբանությունը, դրա հետ առնչված՝ Ռուսաստանի բոլշևիկների դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղը Հայաստանից օտարելու կապակցությամբ:

- Պատմական գիտության հետ ոչ մի կապ չունեցող ադրբեջանական պատմաբանների նկրտումներն այն մասին, իբր Լեռնային Ղարաբաղը պատմականորեն և ազգայնորեն պատկանել է Ադրբեջանին, և 1921թ. այն մտցնելը Ադրբեջանի կազմի մեջ տնտեսական սերտ կապերի շնորհիվ էր, որը հակասում է պատմական օբյեկտիվությանը:

Ծանոթանալով Ս. Դադայանի աշխատության մեջ ընդգծված ադրբեջանական զեղծարար պատմաբանների վերոնշալ զառանցանքներին՝ հնարավոր չէ չհիշել հռչակավոր պատմաբան Զոն Կիրակոսյանի՝ թուրքական արդի կառավարիչների զավթողական քաղաքականության հետևյալ դիպուկ բնութագիրը. «Ներկայիս Թուրքիայի պորտաբույծ վերնախավը՝ հողատեր-կալվածատերերը, կապիտալիստները, առևտրականները, պետական պաշտոնյաները, միլիտարիստ-զինվորականները, հեծած աշխատավոր ժողովրդի վզին, երկրում իրականացնելով հակաժողովրդական, հակադեմոկրատական քաղաքականություն, գործնականում ապացուցում են, որ իրենք երիտասարդ թուրքերի ավանդների հետևողական պաշտպաններն ու ժառանգորդներն են, թուրքիզմի դրոշակակիրները, «գորշ գայլերի» հարազատ զավակները» (Զ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, «Հայաստան» հրատ., 1982, էջ 3):

Հռչակավոր գիտնականի այս բնութագրությունը ամբողջապես վերաբերում է մերօրյա Ադրբեջանի կառավարիչների ու վերնախավի վարած քաղաքականությանը:

Իր վերոնշյալ աշխատության հինգ գլուխներում Ս. Դադայանն ադրբեջանական պատմաբանների սուտն ու կեղծիքը քննադատում է հենց իրենց մոգոնած փաստերի հիմամբ: Նա հմուտ պատմաբանի ու քաղաքագետի կարողությամբ խարազանում է Ադրբեջանի մտավորականների համատեղ վայնասունը Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ, ինչպես նաև նրանց վայրենաբարո հավակնությունները Հայաստանի ու 2800-ամյա հայակերտ ու հայաշունչ Երևան մայրաքաղաքի նկատմամբ:

Ս. Դադայանը փորձառու պատմաբանի հմտությամբ, հայկական, ռուսական և ադրբեջանական ավելի քան 230 աղբյուրների հիման վրա ստեղծել է, հիրավի, լայնահուն ուսումնասիրություն, որի Եզրակացության մեջ ընդհանրացված են առանցքային

այն հիմնախնդիրները, որոնք ունեն արդիական հնչողություն:

Ընթերցելով Ս. Դադայանի սույն բազմաբովանդակ աշխատությունը՝ համոզվում ես նման հետազոտությունների անհրաժեշտության մեջ, միաժամանակ խորհում, որ արդի հայ գիտնականները չպետք է արհամարհեն ադրբեջանական վայ պատմաբան-ների վայրահաչոցները հայ ժողովրդի, Հայոց աշխարհի դեմ, պատասխանեն ամենայն լրջությամբ ու խստությամբ՝ հնչեցնելով ժողովրդի թևավոր իմաստախոսությունը. «Կրակ էլ տաս, ճշմարիտին մահ չկա»:

Կարծում ենք, այս ժամանակահունչ աշխատությունը կարիք ունի հրատարակելու հայերեն և անգլերեն՝ ի լուր արդարամիտ ու ազնիվ պատմաբանների:

Սոկրատ Խանյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ